**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՅԱՍՏԱՆ ԲՖԳ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐ-ՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒ-ԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 27 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագրում /Հայաստան ԲՖԳ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմա-նադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքա-գրված 27.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Խնդրո առարկա համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջեւ, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից այն ստորագրվել է 2009թ. սեպտեմբերի 15-ին:

Համաձայնագրի հիմնական նպատակն է ենթատարածաշրջանային ճանապարհային միջանցքների վերականգնումը, ինչպես նաեւ պետական տրանսպորտային ճանապարհային համակարգի զարգացումը, ճանապարհային ենթակառուցվածքների եւ ճանապարհային ցանցի կառավարման կարողությունների բարելավումը ու ճանապարհների անվտանգության ապահովումը:

Ինչպես վկայում է համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի ուսումնասիրությունը, ակնկալվում է, որ Ծրագրի իրականացման արդյունքում անհամեմատ կավելանան արտահանման եւ ներկրման, ինչպես նաեւ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքով փարանցիկ երթեւեկության ծավալները եւ քանակը, երթեւեկության հոսքն սպասարկելու նպատակով կբարեկարգվեն եւ կարդիականացվեն առնվազն 3 սահմանային եւ մաքսային կետեր ու դրանց ենթակառուցվածքները, կնվազի ճանապարհատրանսպորտային պատահարների թվաքանակը, կկրճատվի միջանցքով բեռնափոխադրումների եւ ուղեւորությունների ժամանակը:

ՀՀ ճանապարհային ենթաոլորտի կատարելագործումը, ըստ համաձայնագրի, ենթադրում է ճանապարհային ցանցի զարգացում, ճանապարհների շինարարություն, բարենորոգում, վերականգնում եւ կայուն պահպանում, ինչպես նաեւ ծրագրավորման եւ կառավարման համապատասխան բարեփոխումներ, որոնք կստեղծեն տնտեսական զարգացման հուսալի նախադրյալներ:

2. Համաձայնագիրը բաղկացած է մի շարք բաժիններից եւ իր անբաժանելի մասը կազմող թվով 6 ժամանակացույցերից, ընդ որում՝ 1-ին ժամանակացույցն իր հերթին բովանդակում է 2 աղյուսակներ, այն է՝ ներդրումների նախնական ծրագիրը եւ ճանապարհային ենթաոլորտի ճանապարհային քարտեզը (2010-2017թթ.):

Համաձայնագրում եւ կից ժամանակացույցերում ներառված են բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ-ի) բաղկացուցիչները, նախնական ներդրումային

ծրագիրը, ճանապարհային ենթաոլորտի ճանապարհային քարտեզը, ԲՖԳ-ի նախագծման եւ մոնիտորինգի հայեցակարգը, ծրագրերի իրականացման շրջանակները, ընտրության չափանիշները, սոցիալական խնդիրները եւ այլ պարտավորություններ:

Ներդրումների նախնական ծրագրի ընդհանուր արժեքը 2009-2017թթ. ժամանակահատվածի համար կազմում է 1.453 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Համաձայնագրի թիվ 1 ժամանակացույցի 2-րդ աղյուսակից բխում է, որ մինչեւ 2017 թվականը բարենորոգվելու են ՀՀ 620 կմ միջպետական եւ 1200 կմ գյուղական ճանապարհներ, ընդսմին՝ 1-ին աղյուսակում բերված է նորոգման ենթակա միջպետական ճանապարհների համապատասխան հատվածների սպառիչ ցանկը (Մ-1, Մ-2, Մ-3, Մ-6):

Համաձայնագրով նախատեսված է, որ վարկատու՝ ԱԶԲ-ն, վարկեր կտրամադրի ներդրումային ծրագրի առանձին բաղադրիչների ֆինանսավորման համար եւ յուրաքան-չյուր վարկ հանդես կգա իբրեւ առանձին տրանշ: Վերջինս կարող է ֆինանսավորվել նախորդ կամ հաջորդ տրանշներից տարբերվող ֆինանսավորման պայմաններով:

Վերը նշված ԲՖԳ-ի շրջանակներում առկա առավելագույն ֆինանսավորման չափն է 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը տրամադրվելու է առանձին տրանշներով ԱԶԲ-ի՝ Սովորական կապիտալ միջոցներից 440 մլն դոլար եւ Հատուկ հիմնադրամի միջոցներից՝ 60 մլն դոլար:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից հատկացվելու է 70 մլն դոլար: Ի դեպ, ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման ենթակա գումարի չափը կազմելու է 392 մլն դոլար:

Վարկառու՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորվում է յուրաքանչյուր տրանշի գումարներն օգտագործել Ծրագրերի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ սույն համաձայնագրի եւ յուրաքանչյուր տրանշի մասին կնքված առանձին համաձայնա-գրերի պայմաններին համապատասխան: Ներդրումային ծրագիրը ֆինանսավորելու համար անհրաժեշտ է ներկայացնել պարբերական ֆինանսավորման հայտ (ՊՖՀ): Յուրաքանչյուր առանձին տրանշի գումարը չպետք է լինի 50 մլն ԱՄՆ դոլարից կամ դրա համարժեքից ցածր: Համաձայնագիրը սահմանում է նաեւ ՊՖՀ-ին ներկայացվող հիմնական պահանջները:

ԲՖԳ-ի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումներն իրականացվելու են ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցին համապատասխան:

Համաձայնագիրը  սահմանում է, որ 2017 թվականի դեկտեմբերի 31-ն այն վերջնաժամկետն է, որի դրությամբ ցանկացած փրանշի շրջանակներում կարող է վճարում կատարվել:

Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցում արձանագրված է, որ Ծրագրի իրականացման պատասխանատուն Ծրագրի կառավարման խորհուրդն է, որի համանախագահներն են ՀՀ էկոնոմիկայի  ու տրանսպորտի եւ կապի նախարարները: Սահմանված է նաեւ, որ ներդրումային ծրագրի անմիջական իրականացումը եւ մոնիտորինգը հանձնարարվելու է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ («Հայավտոճան») ՊՈԱԿ-ին, որը  կհիմնի Ծրագրի կառավարման գրասենյակ:

Համաձայնագիրն  ԱԶԲ-ին  իրավունք է վերապահում ուսումնասիրելու ԲՖԳ-ի շրջանակներում իրականացվող  ծրագրերին առնչվող ցանկացած գործողություն: Մասնավորապես,  ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերը պետք է ներառեն դրույթներ, որոնց համաձայն  ԱԶԲ-ն իրավունք ունի քննության եւ աուդիտի ենթարկելու Հայավտոճանի բոլոր ֆինանսական եւ հաշվապահական փաստաթղթերը, բոլոր կապալառուներին, մատակարարներին, խորհրդատուներին եւ այլ ծառայություն-ներ մատուցողներին:

Համաձայնագրի 4-րդ ժամանակացույցում տեղ են գտել նախագծերի ընտրության չափանիշներին եւ հաստատման գործընթացին վերաբերող պարտավորություններ:

Համաձայնագրի հաջորդ՝ 5-րդ ժամանակացույցում, շարադրված են սոցիալական ապահովությանը եւ երաշխիքներին առնչվող պահանջներ:

Առանձին ուշադրություն է դարձված շահագործման ընթացքում ճանապարհային միջանցքի կայուն պահպանության, ինչպես նաեւ շինարարության որակին,  բնապահպա-նական խնդիրներին վերաբերող հարցերին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու այն պահից, երբ ՀՀ-ն ԱԶԲ-ին կծանուցի գործող օրենսդրության համաձայն  բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին, բայց ոչ ուշ, քան մինչեւ 1-ին փրանշի ծրագրի համար վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

Ըստ համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, մասնավորապես, պարտավորվում է իր սեփական միջոցների հաշվին տրամադրել համաֆինանսավորում Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների գծով՝ համապատասխանաբար 392.0 միլիոն եւ 10.0 մլն

ԱՄՆ դոլարի չափով: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է իր սեփական միջոցների հաշվին կատարել ոչ կամավոր վերաբնակեցման, ինչպես նաեւ ճանապարհային միջանցքի շահագործման ընթացքում ճանապարհների պահպանության գծով առաջացած ծախսերի ֆինանսավորումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագրում /Հայաստան ԲՖԳ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 հունվարի 2010 թվականի
ՍԴՈ-860